№ 182 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 № 182

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Անձեռնտու կարգեր. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հասարակական հոսանքներ. Նամակ Աբասթումանից. Նամակ Իգդիրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անարդար յարձակումներ։

ԱՆՁԵՌՆՏՈՒ ԿԱՐԳԵՐ

ԱՆԱՐԴԱՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՁԵՌՆՏՈՒ ԿԱՐԳԵՐ

Գուցէ ոչ մի տեղ այգեգործները այնքան չեն գանգատվում իրանց արդիւնքների վատ վաճառահանման, մրգերի էժան գնահատութեան մասին, որքան Անդրկովկասում, բայց մի և նոյն ժամանակ դըժուար կարելի է հարաւի շրջանում գտնել վաճառանոցներում աւելի թանգ մրգեր քան նոյն Անդրկովկասում։ Թիֆլիսում և Բագուում, որոնց վաճառանոցները դրաւում են մրգեր ոչ միայն իրանց շրջականերից, այլ և հեռու տեղերից, այնպիսի գներ են իշխում, որոնք աւելի սաղական կը լինէին Ռուսաստանի ներքին նահանգների քաղաքներին, որոնց շրջակաները զուրկ են այդիներից և որոնք չեն կարող հեշտութեամբ ձեռք բերել մրգեր։ Հարաւում, այգիների շրջանում ապրող մեր ազգաբնակութիւնը յաճախ ստիպված է հրաժարվել միրգ գործածելուց՝ նրա չափազանց թանգութեան պատճառով։

Եթէ միրգ արդիւնաբերողի կամ այգեգործի աշխատանքը վարձատրվեր այն աստիճանով, որքան թանգ գնով միրգը ծախվում է վաճառանոցում, այն ժամանակ նա կը լիներ մի վերին աստիճանի շահաւէտ աշխատանք, որ կը դրդեր գիւղատնտեսին ընդարձակել և զարգացնել իր այգեգործութիւնը, բարեփոխելով և բազմացնելով մրգերի տեսակները։ Բայց այժմ մրգավաճառութեան գործը այնպէս է դրված, որ նրանից ոչ մի օգուտ չունի այգեգործը և վնասվում է սպառողը, իսկ շահվում է միայն մրգավաճառը, վերցնելով իր միջնորդի դեր կատարելու համար չափազանց խոշոր տոկոս։

Ներկայ վիճակը անմխիթարական է և աննպաստ մեր երկրի համար։ Կամ տուէք էժան գնով արդիւնք սպառողի ձեռքը և այդպիսով բազմացրէք սպառողների թիւը կամ աւելի բարարար կերպով վարձատրեցէք արդիւնագործողին, այգեգործին, որպէս զի նա դրդում ստանայ մեծացնելու և կատարելագործելու իր արդիւնաբերութիւնը։

Այդ գործի կանոնաւորութեան կարող են նպաստել գիւղատնտեսներից կազմված յատուկ ընկերակցութիւններն և քաղաքների վարչութիւնները։ Ընկերակցութիւնները գիւղատնտեսների միացած ոյժերով կարող կը լինէին բանալ իրանց արդիւնքների վաճառահանութեան համար պահեստներ և խանութներ, կարողութիւն տալով ազգաբնակութեան՝ ձեռք բերելու համեմատաբար էժան գնով արդիւնքներ առանց միջնորդներին դիմելու։ Իսկ քաղաքային վարչութիւնները կարող էին յատուկ կարգադրութիւններով և տեղական վաճառանոցում տիրող կարգերը բարեփոխելով դիւրութիւններ ընծայել արդիւնաբերողներին՝ ի ցոյց հանելու քաղաքի որոշ տեղերում իրանց արդիւնքները և անմիջական յարաբերութիւններ ստեղծելու արդիւնաբերողի և սպառողի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Գրականութեան ահագին նշանակութիւնը եւ մատուցած ծառայութիւնները այժմ ամեն մէկին են յայտնի։ Ազգերի կեանքի մէջ գրական գործիչները այնքան մեծ յեղափոխութիւններ են կատարել, այնքան բարձր դաստիարակչական դեր են խաղացել, որ այսօր ամեն մի ազգի դէմքը, նրա բարոյական ոյժը ճանաչելու եւ գնահատելու համար չը կայ մի այլ միջոց, բացի նրա գրականութիւնից։ Ներկայ ժամանակներում գրականութիւնը ամեն տեղ ընկած է. գոնէ ամեն տեղ գանգատվում են, որ այսօրվայ գրականութիւնը այնքան մանրացած է, այնքան գծուծ ու ստորաքարշ է, որ պէտք է գրական գործիչի լաւ, իդեալական տիպը որոնել անցեալում։ Ո՞րն է այդ իդեալական տիպը։

Մեր ժամանակ—ասում է «С. Петер. Вѣд.» լրագիրը—գրողի գրիչը նոյնպէս սրբազան է, ինչպէս հնում քուրմի գաւազանը. ամեն ինչ, որ մեծ է եւ ուժեղ, որ բարի է ու գեղեցիկ, կարող է դուրս գալ գրողի գրչի տակից։ Գրողի ոգեւորութիւնը—մեծ գործ է. նա պատրաստվում է ամբողջ ժողովրդի տրամադրութիւնից։ Գրողի ոգեւորութիւնը ստեղծողը հասարակական անհրաժեշտութիւնն է, ընդհանուրի պատրաստականութիւնը ընդունելու այն, ինչ կասէ գրողը եւ սովորել նրան, ինչ սովորեցնում է գրողը։ Անտեսանելի թելերով, բայց անքակտելի կերպով, գրողի հոգին միացած է ժողովրդի հոգու հետ. եւ նրա մերձաւորների (երբեմն ամբողջ ժողովուրդն է լինում նրա մերձաւորը) զգացմունքները, մտքերը եւ ցանկութիւնները անցնում են նրա գիտակցութեան մէջ, յուզում են նրան, խոր տպաւորվում են նրա հոգու մէջ եւ ապա ձեւակերպվելով դառնում են բանաստեղծական միտք, ջերմ քննադատական կամ հրապարակախօսական յօդուած, որոնք կենդանարար սերմերի պէս յետ են գնում այն շրջանի մէջ, որը ծնել էր նրանց, այսինքն հասարակութեան մէջ։

Այսպէս էին մեծ գրողները, այսպէս պիտի լինեն իդեալական գրողի հիմնական գծերը։ Ի հարկէ, գրականութեան մէջ երեւալու, մի մեծ գրողի գործերը, ուր չը կան «Ուրբաթներ» եւ «փողոցային երեխաների նման» հագնվողներ։ Այս կէտը հաստատում է եւ ինքը պ. Տ. Ց., անգիտակցաբար առաջ բերելով մի փաստ, որ ամենալաւ վկայագիրն է Ներսիսեան դպրոցի աշակերտների բարեկրթութեան եւ մարդավարութեան։ «Երբ ուսուցիչը,—ասում է պ. Տ. Ց.,—նեղացած աշակերտի վարմունքից, դուրս էր գնացել, դասը կիսատ թողնելով, նրանք յանդիմանել էին իրանց յանդուգն ընկերոջը, ասելով, թէ նա այդպիսի վարմունքով անպատուութիւն է բերում իրանց դասարանին»։ Ահա իսկական բարեկրթութիւնն եւ մարդավարութիւնը, պ. Տ. Ց.։ Աւելին, կարծում ենք, չէ էլ կարելի պահանջել նոյն իսկ նրանցից, որոնց շորերը հեռաւոր նմանութիւն անգամ չունեն փողոցային երեխաների շորերին։

Ինչ վերաբերում է պ. Տ. Ց.-ի նկատողութեանը, թէ Ներսիսեան դպրոցում կան փողոցային երեխաների նման հագնված աշակերտներ—այդ, ի հարկէ, բոլորովին ճիշդ է։ Բայց գիտէ՞ պ. Տ. Ց., որ կան ոչ միայն փողոցային երեխաների նման հագնվողներ, այլ եւ փողոցում ապրողներ, որոնց միակ ապաստանը, միակ հոգացողը եւ խնամատարը եւ վաղ թէ ուշ այդպիսիներին տուն, հագուստ եւ կերակուր տուողը էլի Ներսիսեան դպրոցն է։ Գիտէ՞ պ. Տ. Ց., որ Ներսիսեան դպրոցը աղքատ աշակերտների մասին հոգալու գործում շատ քիչ մրցակիցներ ունի ոչ միայն Կովկասում եւ Ռուսաստանում, այլ նոյն իսկ, որքան գիտենք, նաեւ արտասահմանում։ Եւ եթէ Ներսիսեան դպրոցի 600 աշակերտների մէջ այսու ամենայնիւ մնում են փողոցային երեխաների նման հագնվողներ, այդ միայն ապացոյց է նախ՝ որ դպրոցը այդպիսիներին եւս չէ կամենում զրկել ուսումից, այն ինչ այն դպրոցները, ուր աշակերտների հագուստը չէ վիրաւորում պ. Տ. Ց.-ի բարեկիրթ ճաշակը, չեն էլ թողնում նրանց դռնից ներս նայելու, եւ երկրորդ՝ որ աշակերտների չքաւորութեան դէմ մաքառելու եւ նրան կատարելապէս յաղթելու միջոց չէ մատնում։

Ներսիսեան դպրոցի ներկայացուցիչը ասում է ժամանակակից գրողի ամենատարածված տիպը—արհեստաւոր—գրողին, որի համար չը կան իդէալներ, որ միայն գոյութեան կռիւ է վարում, աշխատելով յաղթել գրական այնպիսի գործիչներին, որոնք ծառայում են գրչին իբրեւ գաղափարի։ Զարչի գրողի յաղթանակը արդէն իր աւերանքներն է ցոյց տալիս. դա տաղանդների պակասն է, գրական տգիտութիւնը։ Այդ դրութեան չնորհիւ է, որ այնքան շատացել են գրական աքաղաղները, «որոնք բազմաթիւ պ. պ. էշերին դուր գալու համար, աշխատում են փոխարինել եւ ոչնչացնել գրական սոխակներին»։ Բայց գրական անկումը հասարակական բարքերի անկումն է. երբ դուրս են մղվում իդէալները, երբ հրապարակը մնում է այնպիսի մարդկանց, որոնք բացի բարձր բղաւելուց եւ ֆիգլեարի ծառայութիւններ գործելուց ուրիշ ընդունակութիւն չեն ունենում, այն ժամանակ գալիս է դեկատենդութեան, մտաւոր եւ բարոյական յայտնի դէմք եւ անուն ստեղծելու իրաւունք եւ կարողութիւն ունեն միայն նրանք, որոնք շնորհք, «աստուածային կայծեր» են ստացել բնութիւնից։ Մարդկութեան կեանքի, պատմութեան վրա ազդել միայն դրանք կարող են։ Բայց ինչ է ժամանակակից գրողը։

Այժմ այդ՝ պատմութիւնը ստեղծողները սաստիկ բազմանում են եւ, պէտք է խոստովանել, մանրանում են։ Գրականութեան մեծ գործը այժմ ուժեղ տաղանդների ձեռքին չէ, ինչպէս առաջ, այլ մնացել է հասարակ գրական գործիչներին։ Գրականութեան ազդեցութիւնը այժմ աւելի ընդարձակ է, քան առաջ, ենթարկել է իրան այնպիսի շրջաններ, որոնք առաջ նրան չէին հպատակվում, օրինակ՝ պետական, մտաւորական շրջանները, նոյն իսկ ժողովրդական մասսայի կեանքի շատ կողմերը, բայց այդ ազդեցութեան մէջ քիչ բովանդակութիւն կայ։ Գրականութիւնը կամաց-կամաց կորցնում է իր ղեկավարող արժանաւորութիւնը եւ յարմարվում է մարդկային իդէալներից հեռացող կեանքին։

Այնուհետեւ յօդուածագիրը ներկայացնում է ժամանակակից գրողի ամենատարածված տիպը—արհեստաւոր—գրողին, որի համար չը կան իդէալներ, որ միայն գոյութեան կռիւ է վարում, աշխատելով յաղթել գրական այնպիսի գործիչներին, որոնք ծառայում են գրչին իբրեւ գաղափարի։ Զարչի գրողի յաղթանակը արդէն իր աւերանքներն է ցոյց տալիս. դա տաղանդների պակասն է, գրական տգիտութիւնը։ Այդ դրութեան չնորհիւ է, որ այնքան շատացել են գրական աքաղաղները, «որոնք բազմաթիւ պ. պ. էշերին դուր գալու համար, աշխատում են փոխարինել եւ ոչնչացնել գրական սոխակներին»։ Բայց գրական անկումը հասարակական բարքերի անկումն է. երբ դուրս են մղվում իդէալները, երբ հրապարակը մնում է այնպիսի մարդկանց, որոնք բացի բարձր բղաւելուց եւ ֆիգլեարի ծառայութիւններ գործելուց ուրիշ ընդունակութիւն չեն ունենում, այն ժամանակ գալիս է դեկատենդութեան, մտաւոր եւ բարոյական ունեցել եւ չունի ոչ մի հայ դպրոց, որովհետեւ չքաւորութիւնը հայ ժողովրդի ահագին մեծամասնութեան բաժինն է առ այժմ։

Մենք բոլորովին դէմ չենք այն միջոցին, որ առաջարկում է պ. Տ. Ց., Ներսիսեան դպրոցի այն չքաւոր աշակերտների դրութիւնը բարւոքելու համար, որոնց դպրոցը, չը նայելով իր գործ դրած խոշոր գումարին, այնու ամենայնիւ չէ կարողանում օգնել։ Թող պ.պ. հոգաբարձուները բաց անեն իրանց քսակը յօգուտ չքաւոր աշակերտների, իսկ ուսուցիչները դեղջեն որոշ տոկոս իրանց ռոճկից նոյն նպատակով։ Միայն նախօրօք զգուշացնում ենք պ. Տ. Ց.-ին, որ իր այդ առաջարկը ընդունվելուց յետոյ՝ այլ եւս ոտք չը կոխէ Ներսիսեան դպրոց, որովհետեւ կարող է պատահել, որ աշակերտներին սազելու համար՝ ուսուցիչներն եւս սկսեն հագնվել փողոցային երեխաների նման... Շատ հեռու չէ։ Յամենայն դէպս պ. Տ. Ց.-ի առաջարկի մէջ նոր է միայն այն, որ հոգաբարձուները օգնեն իրանց անձնական քսակից դպրոցների չքաւոր աշակերտներին, իսկ ինչ վերաբերում է ուսուցիչներին՝ պէտք է ասենք, որ առանց այդպիսի առաջարկների էլ՝ հայ դպրոցների ուսուցիչները, որոնց թւում եւ Ներսիսեան դպրոցինը, միշտ էլ օգնել են չքաւոր աշակերտներին. բայց դնել ուսուցիչների վրա պարտականութիւն անշուշտ օգնելու աշակերտներին՝ զեղջելով նոյն իսկ 5% ռոճիկներից—այդ նշանակում է միայն պակասեցնել ռոճիկները, որին, տարօրինակ լոգիկայով, դէմ է եւ պ. Տ. Ց.։

II «Այսպիսով մենք աննկատելի կերպով արտաքինից անցանք ներքինին, որ, կրկնում եմ, երբէք չէ համապատասխանել Ներսիսեան դըպրոցում ժամկավարժական պահանջներին»։

Այս պարբերութեան մէջ ուշադրութեան արժանի է այն դրական տօնը, որ գործ է ածում պ. Տ. Ց., եւ որով արգելում է ընթերցողին կասկածել անգամ, թէ գոնէ մի օր, մի ժամանակ այդ պատկառելի հասակ ունեցող դպրոցի կեանքում ներքինը համապատասխա-

անանկութեան հոսանքը, որի մէջ ընկած հասարակութիւնը մի անօգնական խեղդվող է։

Մենք, հայերս էլ, վերջին տարիներս շատ նշաններով ցոյց տուինք, որ յետ չենք մնում ընդհանուր ապականութիւնից։ Մենք դեռ մի քանի քայլեր էինք արել այն ուղղութեամբ, որ տանում է գրականութիւնը դէպի իր իսկական, իդէալական նպատակը։ Բայց շուտով յոգնեցինք, շուտով կորցրինք առաջնորդող սկզբունքները եւ սկսեցինք խրվել գրական աքաղաղների ստեղծած հոսանքի մէջ։ Եւ սակայն, մենք իրաւունք չունէինք այդպիսի անձնասպանութիւն գործելու. մեզ համար գրականութիւնը մեր գոյութեան, մեր առաջադիմութեան միակ նեցուկն է. եթէ կայ դժբաղդութիւն, որ սպառնում է ջնջել մեզ քաղաքակրթվող ազգերի շարքից, դա այն է, որ մենք չենք հասկանում մեր գրականութեան նշանակութիւնը եւ նրա անկումը մեզանում, ըստ երեւոյթին, խղճահարութիւն անգամ չէ պատճառում։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

ՖԷՄԻՆԻԶՄ

VII

Պատմական գործօնների մէջ թերեւս չը կայ ուրիշը, որ նոյնքան նշանակութիւն ունենայ մի ազգի ֆիզիկական եւ բարոյական առողջութեան համար, որքան ընտանեկան սրբութիւնը եւ այն քիչ բաների թւում, որոնցով կարող ենք պարծենալ հայերս, առաջին տեղն է բռնում ընտանեկան օջաղի սրբութեան պաշտամունքը։

Մենք շատ լաւ գիտենք, ի հարկէ, որ հայ ընտանիքը, իբր նահապետական ընտանիք, հիմնված է սրբակատիրական սկզբունքների վրա. մենք չենք մոռանում եւ այն, որ հայ տղամարդը իր սեռական բարոյականութեամբ ամենաբարձր չէ ուրիշ տղամարդիկներից եւ որ հայ կինը իդէալական չէ այդ տեսակէտից, սակայն մեզ անկասկած է թւում, որ շատ քիչ ազգեր կան, որոնց մէջ տղամարդը տեսականօրէն այն աստիճան գնահատէ ընտանեկան սրբութեան անխախտութիւնը եւ կինը այն աստիճան հաւատարիմ մնայ այդ սրբութեանը, որքան հայերի մէջ։

Հասկանալի է ուրեմն, թէ որքան կարեւոր է այն հարցը, թէ ինչպէս է վերաբերվում ֆէմինիզմը ընտանիքի գաղափարին։

Կան կարծողներ, թէ կանանց ազատագրութեան նոր առաքելները քարոզում են «ազատ սէր», այդ բառի վատ նշանակութեամբ։

Սակայն այդ թիւրիմացութիւն է, որ տարածվել է մի կողմից չնորհիւ կանանց շարժման «արջի ծառայութիւն» մատուցանող թերթաւարների եւ միւս կողմից չնորհիւ բոլոր ազգերի մէջ գտնվող «աւանդապահ» պարոնների, որոնց մշտական արհեստն է կուռել բոլոր նոր ազատագրական հոսանքների դէմ զրպարտութեան փորձված զէնքով։

Աւելորդ է ասել, որ ամեն մարդ, մանաւանդ ամեն կին, որի համար թանգ է կանանց ազատութեան հարցը, պէտք է աշխատէ փարատել այդ ցաւալի թիւրիմացութիւնը, որ կարող է շատերին խրտնեցնել ֆէմինիստական համակրելի շարժումից, շատերի համար էլ հեշտացնել «ազատ սիրոյ» ճանապարհի ընտրութիւնը։

Այդ տեսակէտից, մեր կարծիքով, մեծ նշանակութիւն ունի ֆրանսիացի յայտնի ֆէմինիստ Ըլնէ Վիվիանիի ճառը, որ նա արտասանել է Պարիզում կանանց վերջին համաժողովում եւ որի համար նա արժանացել է բազմամարդ ֆէմինիստական լսարանի բուռն ծափահարութիւններին։

Նկատելու է եւ այն, որ պ. Վիվիանի սոցիալիստ է, ուրեմն մի կուսակցութեան անդամ, որին ամբոխը սովորել է համարել խառնակեցութեան պաշտպան, եւ որ նա հռչակաւոր Ժօռէսի հետ միասին Միլերանի աջ թեւն է, հետեւաբար եւ հեղինակաւոր անձն իր կուսակցութեան մէջ (անկախ կոչվող ընկերվարականների մէջ)։

Իր ճառի մէջ, որի հատուածների թարգմանութիւնը մենք բերում ենք ստորեւ ազատ թարգմանութեամբ, պ. Վիվիանի թոյլտուութիւն է խնդրում, ֆէմինիզմի շահերի եւ պատուի համար, փարատել որոշ թիւրիմացութիւններ եւ հրաժարվել որոշ կասկածելի հարեւաններից, կարծեցեալ համախոհներից։

«Մենք,—ասում է ճառախօսը,—ընտանիքի հակառակորդներ չենք եւ դրանով զատվում ենք այն ինքնակոչ վերանորոգիչներից, որոնք իրանց ազատ են համարում նախապաշարումներից, որովհետեւ ազատ են մարդավայել զգացմունքներից, եւ որոնք օրինական ընտանիքի մէջ ընդունում են նրա հնադարեան ձեւը եւ շահագործում են այն արտօնութիւնները, որ տալիս է այդ ձեւը տղամարդկանց (ծափահարութիւններ), բայց ծաղրում են այդ նոյն ընտանիքի մէջ այն սակաւաթիւ առաքինութիւնները, որոնց նա թողնում է ծաղկել, այն է ամուսինների հաւատարմութիւնը եւ զաւակների յարգանքը դէպի ծնողները։

«Ինչ վերաբերում է մեզ, մեր ուզածը ընտանեկան մի նոր կարգ է, որի մէջ մնացած չի լինի ոչ մի հետք հին բռնակալութեան, բայց միւս կողմից մենք ցանկանում ենք պահպանել ընտանիքի մէջ, նոր կենդանութիւն տալու համար նրանց, այն բոլոր առաքինութիւնները, որոնք սերունդից սերունդ անցել են մեզ իբրեւ աւանդ։

«Մենք ուզում ենք, որ ամուսնութիւնը լինի մի ազատ ընկերակցութիւն, որի մէջ ամուսինները ունենան հաւասար իրաւունքներ (ծափահարութիւններ)։ Բայց մենք չենք կարող թոյլ տալ, որ մեր քարոզածը շփոթեն այն քարոզի հետ, որ հասարակութեան մէջ «ազատ միութիւն» է անուանվում յաճախ...

«Պէտք է լաւ դնել հարցը։

«Եթէ նրանք, ազատ միութեան մասին խօսելիս, ի նկատի ունեն ապագան, վաղվան հասարակութիւնը, ուր կինը իրաւունքների տէր կը լինի, ուր նա կարող կը լինի ապրել միայն իր ջանքերով եւ իր ձեռքի աշխատանքով, եւ եթէ նրանք ուզում են ասել, թէ ամուսնացու մարդու ընտրութիւնը պէտք է ազատ լինի, ո, այն ժամանակ ես պատրաստ եմ ընդունել նրանց գաղափարը։ (Ծափահարութիւններ)։

«Բայց եթէ այնպէս հասկանանք այդ խօսքերը, ինչպէս նրանք հասկացվում են սովորաբար, եւ եթէ ներկայ ժամանակը ու պայմանները ի նկատի ունենանք,—ես պնդում եմ, որ չը կայ դրանից աւելի վատ որոգայթ կնոջ համար։ (Ծափահարութիւններ)։

«Օ՜հ, ես գիտեմ, որ կան աշխարհիս երեսին զոյգեր, որոնց առաջ ես պատկառանքով խոնարհում եմ գլուխս. կան էակներ, որոնք ապրում են իրար կողքի միմիայն կապված մերված խոստման կամաւոր կապանքով, կան զգայմունքի կողմից մենաշնորհեալ էակներ, որոնք ծերանում են մի բարձի, ծեր ամուսիններ որոնք մնում են միշտ ջահել բարեկամներ՝ առանց երբէք նկատելու իրանց կընճիռները, բայց որքան շատ են նրանք, որոնք հակառակ օրինակն են ներկայացնում, եւ ինչպէս կարող ենք մենք վերցնել ու հասարակական կանոն դարձնել այդ բացառութիւնը։ Կան եւ հարուստ կանայք, որոնք նոյնպէս կարող են ազատ միութեան անձնատուր լինել, որովհետեւ թողնվելու հետեւեալ օրը նրանք նորից կապրեն եթէ ոչ երջանիկ, գոնէ բարեկեցիկ, բայց մի՞թէ այդպիսիների համար են դրվում օրէնքները։ Ոչ, մենք պէտք է մտածենք թշուառ մարդկային հիւլէների մասին, բոլոր անփող, անօջաղ եւ անապահով կանանց մասին։ (Ծափահարութիւններ)։

«Ես պնդում եմ, որ դրանց համար ազատ կենակցութիւնը դարան է եւ որոգայթ։ Այդ միութեան մէջ կինը տալիս է իր ջահելութիւնը իբր մի գերազանց զոհ առնական քմահաճոյքին, բայց յետոյ, երբ գեղեցկութիւնը անցնելուց յետոյ նա կորցնում է իր անկայուն իշխանութիւնը, նա դառնում է մի հարճ, որին արտաքսում են կամ ստորացնում։ (Ծափահարութիւններ)։

«Բայց մի՞թէ ազատ միութեան քարոզը հերքելով, մենք պէտք է ընտրենք մի ուրիշը, որ մօտիկ է նրան։ Մեր բարեկամներից ոմանք, որոնք նոյնպէս կնոջ ազատագրութեան կուսակից են, պահանջում են մեզնից կանոնների տակ դնել ամուսնութիւնը,—նրանք ուզում են հաւասարեցնել ամուսնութիւնը ծառայութիւն վարձելուն, ասել, թէ նա միայն որոշ ժամանակ կը տեւի եւ թէ ամուսիններից իրաքանչիւրը կարող է հրաժարվել նրանից։ Այդպիսով մարդիկ ամուսնանալու են այնպէս, ինչպէս կալուածք են վարձում, 3, 6 կամ 9 տարով, եւ երկու ամուսինները, երբ հասնի տաղտկանալու ժամը, կարող են օգտվել միմեանց վերաբերմամբ ամուսնաթողութեան իրաւունքից։

«Ոչ. ոչ առաջին հայեացքը, ոչ երկրորդը»։

Տ. Ց.

ՆԱՄԱԿ ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ

—

Սեպտեմբերի 12-ին

Սեպտեմբերի սկզբին մեզ մօտ այնպիսի ձմերային ցրտեր էին, որ մի քանի օրվայ ընթացքում բազմամարդ ամարանոցը միանգամից դատարկվեց, ամայացաւ։

Բայց չը պէտք է կարծել, թէ Աբասթումանը բժշկական կուրորտ է միայն ամառվայ ընթացքում։ Որքան բժշկական դիտողութիւնները եւ փորձերը ցոյց են տուել, Աբասթումանը ոչ միայն Անդրկովկասում, այլ եւ ամբողջ Ռուսաստանում յայտնի է, ինչպէս միակ լեռնային կուրորտ, որ ձմեռը զանազան վնասակար քամիներից ազատ եւ ապահով լինելով, կարող է բժշկել հիւանդներին լեռնային կարուկ եւ առնամանիքային օդով։

Սակայն թէ որքան է հնարաւոր ձմեռը «Կովկասեան Դավոսում» բժշկվել, մի հարց է սա, որով անչուշտ կը հետաքրքրվի ամեն մի հիւանդ։

Ձմեռը այստեղ չը կայ բժշկվելու ոչ մի յարմարական պահանջներին։ Քան Ներսիսեան դպրոցինը—չենք կարծում։ Կարդացէք լրագրները եւ ամսագրերը եւ դուք կը գտնէք այնպիսի աչք ծակող փաստեր, որոնք վերջ ի վերջոյ կը համոզեն ձեզ, թէ Ներսիսեան դպրոցը այնքան էլ արժանի չէ ձեր բարկութեանը։

III «Վերջին տարիներս, իմ կարծիքով, դասաւանութիւնը Ներսիսեան դպրոցում կատարվում է նոյն ռուտինայի համաձայն, որ սկզբից տիրում է այնտեղ»։ Սկզբից. կրկին նոյն տօնը եւ նոյն անողոք դատապարտութեան ցանկութիւնը։

Մնում է միայն ենթադրել, որ պ. Տ. Ց. կամ հիմնաւորապէս ուսումնասիրել է Ներսիսեան դպրոցի պատմութիւնը (իսկ մենք տեսանք, թէ որչափ է նա ուսումնասիրել) կամ դպրոցի գոյութեան սկզբից մինչեւ հիմա ուսուցիչ կամ աշակերտ է եղել այնտեղ։ Այլապէս ինչ կերպ բացատրել այդ «սկզբից» անհասկանալի խօսքը։ Եթէ պ. Տ. Ց. փոքր ինչ քննադատական հայեացքով նայէր իր ստացած թռուցիկ տպաւորութիւնների վրա եւ եթէ ոչ Ներսիսեան դպրոցի պատմութեանը, գոնէ հարցնէր այն անձանց, որոնք բաւականաչափ տեղեկութիւններ ունեն նրա մասին, այն ժամանակ կիմանար, որ ներկայ դարի 20 թուականներից մինչեւ այժմ՝ չէ եղել կովկասեան հայերի մէջ մի որքան եւ իցէ աչքի ընկնող մանկավարժական ոյժ, որ դասաւանդած չը լինէր այդ դպրոցում, որին Ներսիսեան դպրոցը հրաւիրած չը լինէր գործ դնելու իր գիտութիւնն եւ եռանդը դպրոցը առաջ մղելու համար. եւ եթէ այժմ նրանցից շատ-շատերի կատարեալ անձնուէր գործունէութիւնը, որ ոչ մի առնչութիւն չունի ռուտինայի հետ, չէ գրաւել պ. Տ. Ց.-ի քաղցր հայեացքը, այդ նրանց մեղքը չէ։ Թերթեցէք Ներսիսեան դպրոցի ուսուցիչների երկար ցանկը եւ նրանց մէջ կը գտնէք ոչ միայն մեր ամենալաւ ուսուցիչներին, այլ նաեւ գրականագէտներին, հրապարակախօսներին, հասարակական գործիչներին։ Դրանք բոլորը ռուտինեօրներ էին։ Դժուար։ Չէ՞ որ նրանց մէջ կային այնպիսիները, որոնք ոչ միայն ռուտինեօրներ չէին, այլ նոյն իսկ յեղափոխիչներ էին թէ գրականութեան եւ թէ հասարակական կեանքի մէջ, որոնք իրանց ամբողջ կեանքը նուիրել էին հէնց այդ ռուտինայի դէմ կռուելու հասարակական կեանքի այլ ասպարէզներում։ Դեռ աւելին կասենք. Ներսիսեան դպրոցը կովկասեան հայերի համար եղել է ոչ միայն լոկ դպրոց, այլ մտաւոր շարժման եւ առաջադիմութեան մի կենտրոնատեղի. նրա մէջն է եռացել միայն կեանքը այն ժամանակ, երբ հասարակութեան միւս տարրերը մրափում էին տգիտութեան խորին անդորրութեան մէջ։ Նա է դրդել եւ արթնացրել հասարակական գիտակցութիւնը. նրա մէջ եւ նրա շուրջն են բարձրացել եւ լուծվել հասարակական շատ հարցեր եւ քայլ առ քայլ առաջ մղել հայ ժողովրդի մի մասը դէպի առաջադիմութիւն։ Ներսիսեան դպրոցն ինքը մրցել է ռուտինայի դէմ։

Ի վերջոյ, մենք կը կամենայինք միայն մի քանի խօսք աւելացնել պ. Տ. Ց.-ի հետեւեալ մեղադրանքի առիթով։ «Փաստ է, վերջապէս,—ասում է պ. Տ. Ց.,—որ աշակերտները աւարտում են դպրոցը գիտութեան շատ աննշան պաշարով եւ խոշորացուցային չափով զարգացած հարցասիրութեամբ, ընթերցասիրութեամբ եւ ինքնուրոյն պարապելու ընդունակութեամբ»։ Դա փաստ չէ. դա մի ինչ-որ անտանելի խառնուրդ է նախ անծանօթութեան այն բանին, ինչի մասին որ խօսվում է, երկրորդ՝ չափազանցացրած պահանջների եւ երրորդ՝ ուղղակի անարդարութեան։ Մի՞թէ պ. Տ. Ց. չը գիտէ, որ Ներսիսեան դպրոցի սաները, ուսման ընթացքն աւարտելուց յետոյ, մինչեւ վերջին ժամանակներս այնքան պաշարով էին մտնում ուսուցչական ասպարէզ, որ մեծ մասամբ կարողանում էին պատւով տանել իրանց գործը։ Գուցէ այս միայն չը գիտէ պ. Տ. Ց. որ Ներսիսեան դպրոցի սաներից շատերը—աղքատ ծնողների զաւակներ—այնքան զարգացած հարցասիրութեամբ էին դուրս գալիս դպրոցից, որ ամեն զոհողութիւն յանձն էին առնում, միայն թէ կարողանային շարունակել ուսումը, բաւարարութիւն տալ իրանց հարցասիրութեանը, առանց դիպլոմական իրաւունքների ակնկալութեան։ Շարունակել ուսումը, գնալ Մոսկվա, Պետերբուրգ, Գերմանիա, Շվէյցարիա—դա մի իդէալ, մի ոսկի ցնորք էր եւ է Ներսիսեան դպրոցն աւարտողների մեծամասնութեան համար։ Վերջապէս քիչ աշակերտներ է տուել Ներսիսեան դպրոցը, որոնք հնարաւորութիւն չունենալով շարունակելու իրանց ուսումը, պարապել են ինքնուրոյնաբար եւ ծառայել գրականութեան, որպէս լրագրական եւ ամսագրական աշխատակիցներ, թղթակիցներ։ Ուզիղ է, այդ ծառայութիւնը համեստ է, աչք չէ շլացնում, բայց մի՞թէ պէտք է ուրանալ նոյն իսկ համեստ ծառայութիւնը։

Իբրեւ եզրակացութիւն պէտք է ասենք, որ մենք հեռու ենք այն մտքից, թէ Ներսիսեան դպրոցը մի կատարելատիպ է, մի օրինակելի դպրոց, որի մէջ ամեն ինչ լաւ ու գեղեցիկ է եւ ոչինչ չը կայ բարեփոխելու։ Ո՛չ, չեշտում ենք, մենք հեռու ենք այդ մտքից։ Դրպրոցը, ինչպէս եւ անհատն ու ժողովուրդը, չը պէտք է կանգ առնի մի կէտի վրա. նա պէտք է անընդհատ առաջադիմէ, պէտք է հետզհետէ կատարելագործվի, աշխատի բաւարարութիւն տալ ժամանակի նորանոր պահանջներին եւ եթէ նա այդ չէ անում, յետամնացութիւնից առաջացած հասարակական վնասն ի նկատի առնելով, պէտք է պահանջել, որ նա անէ. բայց պահանջողը նախ եւ առաջ պէտք է լաւ իմանայ, թէ ինչ է արված արդէն եւ ինչ է մնում անելու։ Այն պահանջողի ձայնին, որ ուրանում է արվածը, որ չփոթում է արվածը չարվածի հետ, լուրջ ուշադրութիւն ոչ ոք չի դարձնի, իսկ պ. Ց. Տ.-ի ձայնին, որ ըստ իր ոճի, «խոշորացուցային» տեղեկութիւններ միայն ունի այն հիմնարկութեան մասին, որից պահանջներ է անում, աւելի եւս պակաս ուշք կը դարձնեն։

Ա. Մխիթարեան

ժարութիւն, չը նայած այն հանգամանքին, որ չատ բժիշկներ են լինում։ Հիւրանոցների սենեակները անյարմար են եւ ձմեռը չատ վատ կերակուր կարելի է գտնել։ Մասնաւոր կահաւորված բնակարանները վառարաններ չունեն, եղած սենեակները արեգակի երես քիչ են տեսնում։ Կենսական մթերքներ չատ քիչ են գտնվում։ Բացի այդ բոլորից. այստեղ ձմեռը այնպիսի տաղտկալի տխրութիւն է տիրում, որ հէնց իրանք, տեղական բժիշկները, խորհուրդ են տալիս հիւանդին այն դէպքում, երբ նա անկարող է ընկերներով կամ ընտանիքով բնակվել, անմիջապէս հեռանալ, մինչեւ անգամ երբ հիւանդը մի ձմեռ մնալով՝ կարող էր կատարելապէս բժշկվել։

Այստեղ ինքնասպանութեան հարց է ծագում. արդեօք հնարաւոր չէ, եթէ ոչ սանատորիում, գոնէ մի եւրոպական բարեկարգ պանսիոն պահել։ Ի հարկէ, աւելի քան հնարաւոր է։ Պէտք է քիչ աշխատանք թափել, գոյութիւն ունեցող բնակարաններից յարմարագոյնը կերպարանափոխել, նորոգել, զուտ շվէյցարական պանսիոնի կերպարանք տալ։ Ապա նոր հիւրանոց չինելիս կամ վերանորոգելիս, վատ չէր լինի մի փորձված բժշկի խորհուրդին դիմել, ի նկատի ունենալով ոչ միայն ամառվայ պահանջները, այլ եւ ձմեռվայ—մի բան, որ աւելի կենսական նշանակութիւն ունի հիւանդների համար քան ամառային յարմարութիւնները։

Կասկած չը կայ, որ շվէյցարական տիպի պանսիոնի գոյութիւնը ձմեռը դէպի Աբասթուման կը գրաւէ չատ հիւանդներ, ուստի եւ Աբասթումանի հռչակը իբրեւ կուրորտի աւելի կը բարձրանայ։ Կ. Տ.-Ց.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Սեպտեմբերի 10-ին

Սաթի ունեցայ վերջին ժամանակներս շրջելու Սուրմալուի գաւառի գիւղերը. ժողովրդի գոհունակութիւնն անչափ էր բերքի առատութեան պատճառով. նա զուարթ էր եւ ուրախ, որովհետեւ այս տարվայ առատութիւնը մոռացնել է տուել նրա անցեալ տնտեսութեան ցաւերն ու կսկիծը։

Այդ աշող հանգամանքների ժամանակ չէր պակասում եւ Սուրմալու գաւառի ջրային շրջանի անդամների ջանասիրութիւնը։ «Մշակի» № 121-ում իմ արած տեսութիւնով ես դիտաւորութիւն, անձնական հաշիւներ չեմ ունեցել մէկի դէմ, իսկ այն մարդասպանութիւնը, որ տեղի է ունեցել Իգդիրում, ոչ թէ ջրի պատճառով է, այլ անձնական թշնամութիւնից առաջացած։ Ե. Ֆրանգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Անդրկովկասեան երկաթուղու Կվիրիլի կայարանի մօտ գտնվող Սակարայի մնկարանը, որ բուսցնում է ամերիկական խաղողի վազեր, երկու օր առաջ ոչնչեց իր գոյութեան տասնամեակը։ Այդ մնկարանում բուսցրած ամերիկական վազերը, իբրեւ ֆիլոկսերային դիմացող եւ նրանից չը վնասվող վազեր, տարածվում են շրջակայ գիւղերում եւ կալուածքներում, կազմելով նոր այգիներ, որոնք տալիս են ապահով բերք։ Ամերիկական վազերի վրա պատուաստելով տեղական խաղողի որթերից՝ աջողվում է ստանալ խաղող տեղական տեսակի։ Տասնամեակը ոչնչելու նպատակով Սակարա էին գնացել երկրագործութեան մինիստրութեան պաշտօնեաներ՝ Գէեվսկի եւ Շիմանովսկի։

—

Ի նկատ առնելով, որ հայալսարանների կողմնակի ունկնդիրները չատ անգամ դիմում են հայալսարանական վարչութիւններին եւ խնդրում են թոյլատրութիւն՝ քննութիւն բռնելու հայալսարանների հարցաքննական ժամանաժողովներում, ներկայացնելով մի եւ նոյն ժամանակ վկայագրեր դէկաններից, թէ նրանք տուել են կիսամեայ հարցաքննութիւնները, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը նորից բացատրեց, որ կողմնակի ունկնդիրներին չէ կարելի թոյլ տալ որ եւ է քննութիւն բռնել հայալսարաններում։

—

Կովկասեան գիւղատնտեսական շաբաթաթերթը յայտնում է ի գիտութիւն կովկասեան գիւղատնտեսների, որ Ամերիկայում բամբակի գինը բարձրացել է եւ ազդել է նոյն կերպով բամբակի գների վրա եւրոպական եւ Մոսկվայի վաճառականներում։ Այդ պատճառով Անդրկովկասում էլ բամբակի գինը պէտք է բարձրանայ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում կազմվում է դարձեալ մի նոր նաւթային ընկերութիւն՝ «Անդրկովկասեան նաւթարդիւնաբերական ընկերութիւն» անունով, որի դրամագլուխը լինելու է 400,000 բուբլի, բաժանված 2000 բաժինների, իւրաքանչիւր բաժինը 200 բուբլի արժողութեամբ։ Ինչպէս լսում ենք, այդ ընկերութեան կազմողները նաւթային գործերին ծանօթ անձինք են եւ պատկանում են հարուստ վաճառական դասակարգին։

—

Մօտ օրերումս սկսելու է իր պարապմունքները Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը կայսերական ազատ-գիւղատնտեսական ընկերութեան կանոնագրութիւնը վերաքննելու համար։ Յանձնաժողովը գործելու է նախագահութեամբ պետական խորհրդի անդամ, ստատսկրետար Վիշնեգրացկի։

—

Պետերբուրգի երգուեալ հաւատարմատարների մէջ—ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները—միտք է ծագել համաժողովի հրաւիրել Ռուսաստանի բոլոր փաստաբաններին։

—

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ արդարացի նկատողութիւնը. «Մի ամբողջ տարի է, ինչ ստացված է Թիֆլիսի Քաժոյենց եկեղեցու վերաշինութեան թոյլտուութիւնը. հարկաւոր գումարը պատրաստ է. ծխականների եւ վերաշինութեան համար ընտրված մասնաժողովի որոշմամբ՝ այս տարի, զատկից յետոյ, պիտի սկսվէր շինութիւնը, եւ հէնց այդ պատճառով էլ եկեղեցին քանդել են տուել։ Բայց այսքան ամիսներ են անցել եւ դեռ մի քար անգամ չէ դրված։ Ինչպէս լսում ենք, պատճառն այն է, որ եկեղեցու երէցփոխը, հակառակ կայացրած որոշումներին, վճռել է մենակ, ինքնագլուխ նոր յատակագիծ կազմել տալ, նոր թոյլտուութիւն ստանալ եւ ապա միայն սկսել շինութիւնը։ Մի կողմը թողնելով այն, որ երէցփոխը առանց ծխականների թոյլտուութեան իրաւունք չունէր այդպէս վարվելու, հարցնում ենք. եթէ եկեղեցին չէր լինելու հաստատված յատակագծի համաձայն, ինչ հարկաւորութիւն կար քանդել եկեղեցին, հաւասարացնել գետնի հետ եւ ապա միայն մտածել նոր յատակագծի մասին։ Զարմանում ենք նոյնպէս, որ շինութեան մասնաժողովը լուռ ու անգործ է. էլ ինչի համար էր նա ընտրված»։

—

Հին-Նախիջեւանի գաւառի ԿՈՒԼԻԲԷԿ-ԴԻԶԱ գիւղից մեզ գրում են. «Հազիւ մի արեւի եւ օրթի երես տեսանք, կրկնում են հազարաւոր բերաններ եւ փառք տալիս Աստուծուն։ Պարբերաբար տեղացող անձրեւները եւ ամպամած երկինքը այն ասիճան էին վախեցրել եւ յուսահատ դրութեան մէջ դրել մեր խեղճ ժողովուրդը, որ նա, մոռանալով անցեալ տարվայ Եղիայի երկինքը եւ միրաքների լրբութիւնները, Աստուած կանչելով էր իր օրը անցկացնում, որպէս զի դադարեն անձրեւները։ Բայց պէտք է ասել, որ ժողովրդի երկիւղը մասամբ ճշդվեց. խաղողի մի քանի տեսակները զգալի կերպով վնասվեցին, որն այժմ պարզ աչքի է ընկնում, որովհետեւ այգիներում մենակ տեսնում էք թփերից զրկված վազեր իրանց մանր եւ վտիտ պտուղներով։ Բերքը, սակայն, ընդհանրապէս, կարելի է ասել, առատ է։ Փոխանակ դիմելու բժշկական միջոցների՝ խաղողի հիւանդութիւնների առաջն առնելու համար, մեր ժողովուրդն այս դէպքումն էլ ձեռք է մեկնում նախապաշարմունքներին. ինչ կարծիք, ընթերցող, որ այստեղ էլ դարձեալ մեր տէր-Մաթալների մատը խառն է։ Սրանք դերգում են առանց այն էլ պատրաստ կանգնած ժողովուրդը գնալ Աստապատ գիւղը եւ այնտեղից ս. Յովհաննէսի աղբիւրի ջրից բերել եւ սրսկել վազերի վրա, որպէս զի եկող տարի էլ նրանք չենթարկվեն հիւանդութիւնների եւ չը զրկվեն իրանց թփերից ու լաւ պտուղ տան։ Եւ իրօք, ուրիշ ինչ կարելի է սպասել մեր փարաջաւորներից, որոնք յաճախ իրանց արտաքինով էլ չեն զանազանվում իրանց ժողովրդից. գիւղերում նրանց շատերի հագին գիւղացու սովորական հագուստն է. փարաջի երես չէք տեսնի, դա պահված կը մնայ զատկի, տուն օրհնելու եւ մի վարդապետ կամ եպիսկոպոս գալու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

«Չինական հորիզոնը—ասում է «Россія» լրագիրը—սկսում է, ըստ երեւոյթին, պարզվել։ Գոնէ հեռաւոր արեւելքից այժմ ստացվող տեղեկութիւնների մէջ չը կան նախկին անվերջ հակասութիւնները եւ ընդհակառակը՝ նկատվում է մի անփոփոխ ուղղութիւն, որը ցոյց է տալիս, թէ չինական կառավարութիւնը փոխել է իր քաղաքականութեան ընթացքը եւ հրաժարվել է այն կրկնակի խաղից, որ գործ էր ածում իր յարաբերութիւնների մէջ օտարերկրեայ պետութիւնների հետ։ Նա համոզվեց, վերջապէս, որ այդ վտանգաւոր խաղը ոչ մի օգուտ չէ կարող տալ Չինաստանին, աւելի եւս խճճելով ու բարդելով առանց այն էլ բաւականաչափ բարդված չինական հարցը։

«Լաֆֆանի գործակալութիւնը» հաղորդում է Պեկինից, թէ չինական կայսրը, գերմանական կայսրի հացէին ուղղած նամակի հետ միասին, մի այլ նամակ ուղղեց եւրոպական միկադոյին։ Այդ նամակում չինական կայսրը իր ցաւակցութիւնն է յայտնում եւրոպական դեսպանատան քարտուղարի սպանման առիթով եւ հաղորդում է, թէ եւ Պեկինում եւ Եւրոպայում միջատակի զոհեր կը մատուցվեն կայսրի հաշւով եւ թէ այդ ծախսի համար արդէն նշված է 5000 տայել։

«Morning Post» կարծիք է յայտնում, թէ պրինց Տուանի պաշտօնանկութիւնը միայն նիւթական վնաս կը հասցնէ նրան, զրկելով այն բոլոր հասոյթներից, որ ստանում էր նա իբրեւ չինական պետութեան ամենաբարձր պաշտօնեաներից մէկը։ Չինացիներից ստացված տեղեկութիւններին նայելով՝ կայսրուհին առաջին անգամ տեղեկութիւն ստացաւ Տուանի անբարեսիրտ վարմունքի մասին միայն սեպտեմբերի 19-ին։ Բացի դրանից, սեպտեմբերի 21-ին նա ստացաւ Լի-Խունգ-Զանգի հեռագիրը, որի մէջ նա ասում է, թէ պրինց Տուան ամենեւին օգտակար խորհրդատու չէ կայսրուհու համար։ Հէնց այս հեռագիրն էլ մերձաւոր պատճառ դարձաւ Տուանի պաշտօնանկութեան։ «Morning Post»-ի թղթակիցը հաւանական է համարում, որ Լի-Խունգ-Զանգ այս բովանդակութեամբ հեռագիր ուղարկելով կայսրուհուն, օգուտ է քաղել ամերիկական դեսպանի խորհրդից եւ աշխատել է պետութիւնների պաշտօնական պահանջից առաջ՝ պատժել տալ Տուանին չինական կառավարութեան ձեռքով։

Անգլիական լրագիրները հետեւեալ մանրամասնութիւններն են հաղորդում Բիւլօվի յայտագրին Ֆրանսիայի կողմից տուած պատասխանի մասին։ Անպայման անհրաժեշտ համարելով բաւարարութիւն պահանջել չինական կառավարութիւնից գերմանական դեսպանի սպանութեան եւ դեսպանատների վրա գործած յարձակման համար, Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութիւնը բոլորովին համաձայն է Գերմանիայի հետ այս կէտում։ Եւրոպան պէտք է ցոյց տայ, որ Չինաստանում կատարված ոճիրների յանցաւորները չեն կարող ազատվել նրա ձեռքից։ Բայց այդ յանցաւորներին պատժելու կամ պետութիւնների ձեռքը յանձնելու պահանջը չը պէտք է արգելք դառնայ բանակցութիւններ սկսելուն չինական լիազօրների՝ պրինց Ցինի եւ Լի-Խունգ-Զանգի հետ։ Այդ բանակցութիւնները պէտք է վերաբերվեն միայն հարցի նիւթական կողմին, նոյնպէս եւ խաղաղութեան երաշխաւորութիւններին եւ ապագայում հաստատվելիք կարգ ու կանոնին։ Ֆրանսիական կառավարութիւնը ենթադրում է ապա, թէ չինական երկրի ամբողջութիւնը պահպանելու ամենալաւ միջոցը այն է, որ թոյլ չը տան Չինաստանին ի չարը գործ դնել իր զինուորական ոյժերը։ Այս նպատակին հասնելու համար՝ Ֆրանսիական պատասխանն առաջարկում է արգելել զէնքի ներմուծումն Չինաստան, հիմնայատակ անել Պեկինի եւ ծովափի մէջ գտնվող ամրութիւնները եւ վերջապէս բաւականաչափ ուժեղ զօրաբաժիններ պահել Պեկինում դեսպանատների պաշտպանութեան համար։ Ֆրանսիական պատասխան-յայտարարագրի վերջում յայտնված է, թէ Ռուսաստանն ու Եւրոպան ընդունեցին այս առաջարկութիւնները եւ միայն մնում է Անգլիայի համաձայնութիւնն ստանալ, որպէս զի կարելի լինի անմիջապէս ձեռնամուխ լինել բանակցութիւնների։

«Köln. Zeitung» հաղորդում է, թէ գերմանական առաջարկի վերաբերմամբ ստացված պատասխանները համոզում են, որ վերջապէս համաձայնութիւնը պետութիւնների մէջ՝ միաբան դիպլոմատիական բանակցութիւններ սկսելու մասին՝ կայացել է արդէն։ Պեկինի օտարերկրեայ դեսպանները սկսել են խորհրդակցութիւններ կազմել բանակցութիւնների մի ընդհանուր ծրագիր մշակելու համար։

«Franc. Zeitung» տեղեկութիւն է ստացել Շանգհայից, թէ ամերիկական զօրքերը հրաժարվեցին մասնակցել այն զօրահանդէսին, որ կազմված էր ի պատիւ կոմս Վալդերզէէի.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Рус. Вѣд.» լրագրին հեռագրում են Լօնդօնից, թէ ընտրութիւնները թէպէտ եւ աջողութեամբ սկսվեցին ազատամիտների համար, բայց յետոյ միանգամից չատ վատ ընթացք ստացան։ Լօնդօնում եւ նահանգական մեծ կենտրոններում ազատամիտները կորցրին տեղերի մի ամբողջ չարք։ Զբաղվեցին պատերազմի յայտնի հակառակորդներ՝ Պիկերսգիլլ, «Star»-ի խմբագիրը, պրոֆէսոր Ստիւարտ, Ստէնգօպ՝ Զեմբէրլէնին մերկացնողը եւ Ստէմսան։ Առ այժմ մինիստրական կուսակցութիւնից ընտրված են 279, իսկ դիմադրական կուսակցութիւնից—115 անձինք։

—«Manchester Guardian» հաւատացնում է, թէ հօլանդական կառավարութիւնը իր տեսակէտից համարում է եւ այսուհետեւ ես կը չարունակէ համարել Տրանսվալն եւ Օրանժեան հանրապետութիւնը անկախ պետութիւններ, մինչեւ որ Անգլիան պաշտօնապէս յայտնէ եւրոպական պետութիւններին այդ երկիրների միացման մասին։ Բացի դրանից Հօլանդիան, հաւանականաբար, դիմումն կանէ անգլիական կառավարութեան Տրանսվալից աքսորվածների մասին։ Դիմումը կանվի ոչ միայն հօլանդացիների վերաբերմամբ, այլ եւ բօէրների, ռուսների, լեհացիների եւ գերմանացիների վերաբերմամբ, որոնք ցամաք են դուրս եկել հօլանդական ծովեզերքում եւ յանձնել են իրանց հօլանդական կառավարութեան հովանաւորութեանը։

—«Allgemeine Zeitung»-ին հաղորդում են Ամստերդամից, թէ Տրանսվալի պետական ամենանշանաւոր գօկումենտները, որոնք պայծառ լոյս են սփռում հարաւ-ափրիկական պատերազմի ամենահեռաւոր պատճառների վրա, վաղուց արդէն գտնվում են ապահով տեղում։ Նոյնպէս եւ պետական գանձի այն մասը, որ չէր գործ դրված պատերազմական ծախսերի վրա, վաղուց դրված է նեդերլանդական բանկը։ Այս պատճառով անգլիացիները ոչ մի հիմնաւոր պատճառ չունեն հակառակելու Կրիւգերի ճանապարհորդութեանը դէպի Եւրոպա։ Տեղեակ շրջաններում հաւատացնում են, թէ Կրիւգէր ամենեւին մտադրութիւն չունի ընդմիշտ բնակութիւն հաստատել Հօլանդիայում։

—«Marning Post»-ին հաղորդում են Պրետորիայից, թէ Բարէնա Ֆորստէր հիմնել է նոր հանրապետութիւն Զուտպանբերգի շրջանում եւ թէ գեներալ Բոտա մտադիր է միանալ նրա հետ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

26 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական։ Մի նաւաստի եկաւ Բօզարիօից դէպի Տայն գետը հիւանդ դրութեան մէջ եւ ապա ուղեւորվեց Ալանդաֆ (Ուէլսում), բայց որովհետեւ նրա հիւանդութիւնը կասկածելի երեւաց, ուստի եւ նրան առանձնացրին։ Սեպտեմբերի 22-ին նաւաստին մեռաւ եւ հետազօտութիւնը ապացուցեց, որ նա մեռել է ժանտախտից։

ՏԵԱՆՁԻՆ։ Գերմանական զօրաբաժինը մի քանի մղոն Տեանձինից հեռու, հարաւակողմում, յանկարծ պատահեց 8,000 չինացիների, որոնց բռունցքամարտների տեղ ընդունեց։ Գերմանացիները յետ մղվեցին եւ ստիպված էին նահանջել։

ՏԵԱՆՁԻՆ։ Հիմք կայ ենթադրելու, որ թշնամու զօրքերը կազմված էին ոչ բռունցքամարտներից, այլ Լի-Խունգ-Զանգի՝ պատերազմական գործերի մէջ վարժ զինուորներից, որոնց հրաման էր տուած սպասել Տեանձինի մօտակայքում եւ օգնութեան հասնել այն դէպքում, եթէ օտարերկրայիները կամենային արգելք լինել Լի-Խունգ-Զանգին Պեկին ուղեւորվելու։

24 սեպտեմբերի

ՆԻԿՕԼԱԵՎ։ Նաւարանից դուրս հանվեց Սեւ ծովի նաւատորմի մի նոր տիտան, «Князь Потемкинъ Таврическій» զրահակիրը։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Telegraph»-ին հաղորդում են Կանտոնից, թէ 5000 խռովարարներ ջարդեցին կայսերական զօրքը եւ գրաւեցին այն կէտերը, որոնք գտնվում են Միրս եւ Դիպ ծովախորշերի մէջ տեղում։ Խռովարարները գնում են դէպի հարաւ։

ՇԱՆԴՀԱՅ։ Ֆրանսիական զօրքերը գրաւել են Լուկայզեաս, որ գտնվում է Լուխանի երկաթուղային գծի վրա, ռուսներն եւ գերմանացիները—Պէյտանի մարտկոցները եւ Տունդջօուի ու Կայտէնի ածխահանքերը. նրանք այսպիսով տիրում են հիւսիսային Չինաստանի ածխային պաշարներին։ Բացի դրանից ռուսների ձեռքին է նաեւ երկաթուղին։

ՆԻՒ-ԻՕՐԿ։ Պէկինից հեռագրում են, որ ամերիկացիները չեն մասնակցում Պաօտինֆուի արշաւանքին։ Լի-Խունգ-Զանգ յայտնեց գեներալ Գէզլիին, որ եթէ դաշնակիցները կամենում են գրաւել Պաօտինֆու, չինացիները յո

ժարութեամբ կը յանձնեն։ Նոյնպիսի հաւատիացում տուեց Լի-Խունգ-Զանգ եւ ուրիշ զեներալներին։ Ամերիկացիները այն կարծիքի են, որ արշաւանքի նպատակն է միայն ցոյց տալ պետութիւնների զինուորական ոյժը եւ մի եւ նոյն ժամանակ վրէժխնդիր լինել։ Նրանց կարծիքով դա կը խանգարէ խաղաղութեան վերականգնելուն։

ՊԷԿԻՆ։ Գեներալ Եամագուչի կազմակերպում է մի նոր եապոնական բրիգադա, որը կը գտնուվի Զինաստանում. 2000 ժարդիկ մնում են այստեղ, իսկ մնացածները զետեղված կը լինեն Պէկինի եւ Տակուի միջեւ եղած հաղորդակցութեան գծի վրա եւ ուրիշ կէտերում։ Գերմանական 8000 եւ 1500 ամերիկական զինուորներ ամբողջ ձմեռը կը մնան Պեկինում։ Թէ որքան անգլիացիներ են մնում—դեռ եւս վճռած չէ. երեւի կը մնայ մի բրիգադա։ Դաշնակիցները վեց ամսվայ պաշար են պատրաստում։ Ռուսները իրանց պահակախումբը տարան կայսերական այգիներից, որոնք իսկոյն եւ եթ գրաւեցին գերմանացիներից։ Գերմանացիները Վալդերզէէի շտաբի համար գլխաւոր բանակ են պատրաստում այն չինութեան մէջ, ուր առաջ բնակվում էր այրի կայսրուհին։ 600 անգլիացիներ գրաւեցին ամարային պալատը։

ԿԱՊՇՏԱԴ։ Վէպէնէր, Բուկովիլ եւ Ֆինբուրգ գտնվում են բօէրների ձեռքին, ակնբեւ է այն բօէրների, որոնց անգլիացիները քշեցին դէպի հարաւ։ Փորձ է արված շրջապատելու բօէրներին։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանացիների կողմից յայտնված է, թէ տեղեկութիւնը արշաւանքի մասին դէպի Սինանֆու չինծու է։ Տօնգլու-Պեկին երկաթուղային գծի վերաբերմամբ տեղի ունեցաւ ռուս-գերմանական համաձայնութիւն, որով Տօնգլու-Եանցէի բաժինը պէտք է ենթարկվի ռուսներին, իսկ Եանցէ-Պեկինի բաժինը—գերմանացիներին։

ԼՕՆԴՕՆ։ Պեկինից հաղորդում են, թէ պրինց Ցին սեպտեմբերի 22-ին ստացաւ կայսերական հրովարտակ, գրված սեպտեմբերի 18-ին, որպէս պատասխան Ցինի զեկուցագրին, որի մէջ նա դեսպանների կողմից խորհուրդ էր տալիս, որ արքունիքը վերադառնայ Պեկին։ Կայսրը յայտնում է այդ հրովարտակով, թէ կը վերադառնայ Պեկին այն ժամանակ, երբ բանակցութիւնները բարեյաջող ընթացք կը ստանան։ Ապա ասվում է, թէ նրան հարկաւոր են չինացի կառավարիչներ նրա համար, որ ճնշեն չինացիների ապօրէն գործողութիւնները Պեկինում։ Շատ չինացիներ նահանգներում ընդունում են զինաւորման հրաւէրը, որ արված էր յունիսեան հրովարտակով։ Ինչպէս հաղորդում են չինացիները, 50,000 անձինք հաւաքվում են հարաւ-արեւմտակողմում։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Զաֆֆի հաղորդում է, թէ բոլոր ամերիկացիները, բացի դեսպանատների պահապան զինուորներից, կը հեռանան Զինաստանից երկու շաբաթից յետոյ։ Ամերիկացիները այլ եւս չեն մասնակցի պատերազմական գործողութիւններին, եթէ նրանց վրա յարձակումներ չը գործվեն։

ՊԵԿԻՆ։ Դիպլոմատիական մարմնի անդամներին ուղարկված է այն հրովարտակի պատճէնը, որով Կան-Ի, Ցզայտին եւ Ցզանին պրինցները զրկվում են աստիճաններից։ Պրինց Տուան կորցնում է պաշտօնը, թոշակը եւ յանձնվում է պալատի մինիստրութեանը պատժելու համար, իսկ Կան-Ի եւ Զժաօչժուչժեայօ յանձնվում են ցէնզուրային վարչութեանը։ Կայսրը մեծ նշանակութիւն է տալիս այն բանին, որ չը յապաղեց խիստ կերպով վարվել իր սեփական ընտանիքի անդամների հետ, որոնց պախարակում է պետական գործերը վատ վարելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Վանքի եկեղեցու ծխականների ժողովը, որ նշանակված էր ամսոյս 24-ին երեք պատգամաւորների ընտրութեան համար՝ յետաձգվեց հոկտեմբերի 1-ին՝ ծխականների թիւը լրիւ չը լինելու պատճառաւ, ուստի խնդրեմ յարգելի ծխականներին չնորհ բերել նշանակեալ օրը։ Ժողովը կը բացվի ուղիղ առաւօտեան ժամի 12-ին. հրաւիրատոմսեր այլ եւս ուղարկվելու չեն։

Նախագահ Ղ. ա. ք. Խարազեանց
(հ. շ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թ. լոյս տեսած գրքերը.

172 Առակք Լաֆոնթէնի, թ. Մ. Նոպարեանի . 1 —
173 Գռեհիկ, Օժէշկոի, թարգմ. Ա. Մ. . . . . —40
174 Խղճով դատաստան, թարգմ. Ստ. Մ. . . . — 5
175 Հայկական նշանագրեր հարթակալի համար, օր. Ե. Պատկանեանի . . . . . —80
176 Հոսհոսի ձեռատետրը, Ց. Պարոնեանի բ. տպ. 1 —
177 Սիֆիլիս, կակուղ շանկր և սուսունակ, բժշկ. Վահան Արծրունու . . . . . —25
178 Մանկական լոտո, հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն լեզուով, բ. տպ. . . 1 —
179 Մակսիմկա, Ստանիւկեվիչի, թարգմ. Ա. Մ. . —15
180 Թշուառների բարեկամ, փոխ. բժշկ. Վ. Արծ. —20
181 Իւլեանկա, թարգմ. Պ. Հովուեանցի. . . . —10
182 Արդար ծերունի, Հիւգոյի, թարգմ. Ա. Մ. . —15
183 Եասի արկածքները, Օժեշկոի, թարգմ. Պ. Պ. —10
184 Պառաւ ծիտը, թարգմ. Տ. Սարգսեանի . . — 3
185 Ի՞նչ է խօսում սենեակը, թարգմ. Զ. Տ.—Գ. —10
186 Միլ'տոն, կազմեց Հ. Առաքելեան . . . . —30
187 Մեծապատիւ մուրացկաններ, Ց. Պարոն. դ. տպ. —40

Վաճառվում են Ընկերութեան օգտին

Ազատութեան մասին, Միլլի, թարգմ. Ա. Կ. . . 1 20
Ֆրանս-Պրուսական պատերազմը . . . . . — 5
Ժողովածու Մոսկվայի հայ ուսանողների . . . 1 —
Կորիւն վարդապետ և Նորին թարգմանութիւնք, գրեց Նորայր Հ. Բիւզանդացի 1 50
Ագուլեցոց բարբառը, Ս. Սարգսեանի . . . . 2 —
Մեղուներ, Լ. Լանդստրոտ, թարգմ. Զօկ . . . —15

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. 3—10

Տալիս եմ մասնաւոր դասեր Հայերէնի եւ գրականութեան. նաև գերմաներէնի։

Հասցէս Շ Ա Ն Թ

Грибоѣдовская 40, кв. кап. Егорова. 6—8

Վիէննայում լոյս տեսաւ

„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ"

I մաս

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կտրիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.
(Ճանապարհածախքով 1 ր. 75 կ. կամ 4 ֆր.)

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, իսկ արտասահմանից Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/2, Mechitharistengasse 4.

(ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՍԱԿԱՒԱԹԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ)

(հ. շ.) 13—20

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъфонъ-Бреннеръ

1] Курсъ коммерческой ариѳметики, 2-е изданіе.
2] Самоучитель двойной бухгалтеріи и
3] Руководство по составленію отчетовъ.

Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71. 16—20

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ, 5—7 ժ.։ Երեւանեան հրապարակ. տ. Խարազեանի. Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ Эриванская площадь, домъ Харазова. (Ե. հ. շ. 15—25

Լոյս տեսաւ

ԿԱՄԻԼԼ ՖԼԱՄՄԱՐԻՕՆԻ

ՈՒՐԱՆԻԱ

ասողագիտական վէպը

Թարգմ. ֆրանս. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ։

Գիրքը տպված է լաւ եւ չքեղ թղթի վրա, 376 երես, մէջակ դիրքով եւ արժէ 1 ր. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, Г. Галустянцу, Лорис-Меликовская, № 11. 7—10

Սայլապան Շահնազարեանց, որ հազիւ հազ կարողանում էր մի կերպ ապրեցնել իր բազմանդամ ընտանիքը (վեց փոքրիկներ) վերջին ժամանակ սալը շուռ գալով՝ տակն է ընկել եւ կոտրել ոտը. մնացել է թէ ինքը, թէ կինը հիւանդ՝ անկողնիներում եւ փոքրիկները ամենաթշուառ, անօգնական դրութեան մէջ։ Լալագին խնդրում է բարեսիրտ մարդկանցից թէ նիւթական եւ թէ բժշկական օգնութիւն։

Հասցէն։ Харпухск. ул., д. Гулазова, № 306. 5—5

Բ Ժ Ի Շ Կ

ՏԻԳՐԱՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ընդունում է առաւօտեան 11—12 ժ. եւ երեկոյեան 5—6 ժ.

Մասնագիտութիւն՝ ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։

Шелковниковская (Большая Кривая), д. Шаумова, № 18. 1—20

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ մաթեմատիկայի համար հարկաւոր է համալսարանական մի ուսուցիչ, շաբաթական 20—24 դասով. դասագինը 40 ռուբլի։

Դիմել հոգաբարձութեան (Эривань, попечитель. армянск. духов. семинаріи)։

Տեսուչ՝ Գ. Տատեան

ՀՐԱՒԷՐ

Առաջիկայ կերակի օրը, հոկտեմբերի 1-ին, ս. պատարագից յետոյ, 12 ժամին, այսու յարգոյաբար հրաւիրվում են Վանայ, Կաթողիկէի, Բեղդեհէմի, Աւետաց, Մողնոյ, ս. Նշանի, Նորաշէնի, Քամոյեանց, Քարափի եւ ս. Սարգիս եկեղեցիների բարեպաշտ ձայնատու ծխականները վերոյիշեալ եկեղեցիները՝ երկրորդ եւ վերջին անգամ մասնակցելու երեք-երեք պատգամաւորների ընտրութիւններին, որոնք պէտք է ընտրեն Թիֆլիսի Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի համար հոգաբարձուներ։

Գործակալ ա. մասի եկեղ. հայոց Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեան
1—2

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՄԵԼԻՔ-ԻԻՍՈՒՓ

պատմական պօէմա

ԳԻՆԸ է 20 կոպ.

Тифлисъ, Центральная Книжная Торговля. 2—3

ՀՐԱՒԷՐ

Այս հոկտեմբերի 1-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին, նշանակված է երկրորդ անգամ երեք պատգամաւորների ընտրութիւն Ներսիսեան հոգեւոր դպրոցի համար։ Ուստի խնդրում եմ Կուկիայի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցու ծխականներին՝ նշանակեալ օրը ներկայ լինել նոյն եկեղեցում ընտրութեան մասնակցելու։

Նախագահ՝ Ներսէս ք. Ղամազեանց
1—2

ԲԺԻՇԿ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ]. 15—25

ՏԱԼԻՍ ԵՄ

հայերէնի եւ կար ու ձեւի ԴԱՍԵՐ

Ցանկացողները պէտք է հասցէն թողնեն Դվորցովայա փող., Փիրալովի մագազինում, Նիկողայոս Պապովեանի մօտ։ Дворцовая ул., магазинъ Пиралова, у Ник. Попова. 3—4

ԵՐԿՐՈՐԴ ԻԳԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ, որ գոյութիւն ունի 12 տարուց ի վեր, պարապմունքները կը սկսվեն հոկտեմբերի 8-ից։

Անցնում են կրօն, լեզու (հայերէն ռուսերէն, եւ վրացերէն) թուաբանութիւն եւ ձեռագործ ժամը 12—4.

Ուսումնարանը գտնվում է Միջին եւ Կաթոլիկաց փողոցների անկիւնում, արհեստաւորաց դպրոցի չինութեան մէջ։ 2—3

ԲՕՄԲԷՅԻ ԵՒ ՑԷՅԼՕՆԻ ԹԷՅ

Բոմբէյի եւ Ցէյլօնի առաջնակարգ թէյի տուներու հետ ուղղակի բանակցութեան մտած եւ այս անգամ Բոմբէյի ընտիր թէյերէն զանազան տեսակներ բերել տուած ենք խիստ գիւրամատչելի գիներով։

Ամեն անոնք՝ որք կը փափագին արժան եւ ընտիր թէյ գնել մեծաքանակ, թող հաճեն դիմել մանրամասնութեանը համար Մայսուրաձէ եւ Խօջափարուխովի քարավանսարան, թիւ 16, Հայկ Փէշտիմալճեանի գրասենեակն։

Քիչ օրէն նաեւ կը ստանանք Ցէյլօնի թէյերէ կարեւոր բառթի մը, որոնք արդէն ճամբայ եկած են։ (Ե. ու.) 4—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 11/24 հոկտեմբերի—շոգենաւը, ԱՆԱՏՕԼԻ կապիտան ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են ռովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. հ. շ. 18—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Տեղափոխվեց նոր բնակարան—Նիկոլաեվսկայա փողոց № 46. (Николаевская ул. № 46)։ (հ. ուր. շ.) 8—15

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XI շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եւ բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։
Բ.) Առեւտրական թուաբանութիւն։
Գ.) Առեւտրական նամակագրութիւն։
Դ.) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1900 թվի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (Ե. հ. շ) 27—30

Дозволено цензурою, Тифлисъ. 27 Сентября 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.